ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒՆՎԱՐԻ 2025թվականի N 7-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՆԴԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԿԻՆ ՏԵՍՔԻ ԲԵՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրությունը.

02.05.2024թ. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության Կոտայքի և Գեղարքունիքի մարզային վարչության «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տեղամասի ծառայողի Ժ/Պ Շահեն Էդիկի Գրիգորյանի կողմից Պետական անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում պահպանության և անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների օրենսդրության խախտումների վերաբերյալ արձանագրություն է կազմվել այն մասին, որ Արտակ Հարությունի Առաքելյանը «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում՝ «Արտանիշի» արգելոցում պետական սեփականություն հանդիսացող հողամասի վրա առանց հողօգտագործման իրավունք ունենալու, առանց թույլտվության տեղադրել է թվով 1 հատ շարժական 9x6 մետր չափերի տնակ և իրականացրել կիսակառույց 9x6 մետր չափերի շինարարություն:
Նշված արձանագրությունը 07.06.2024թ. «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարողից գրությամբ ուղարկվել է Ճամբարակի համայնքապետարան վերջինիս կողմից իրականացված ինքնակամ շինությունները ապամոնտաժելու մասին որոշում կայացնելու առաջարկով:
09 օգոստոսի 2024թ.-ին Ճամբարակի համայնքապետարանում «ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով վարչական վարույթ է հարուցվել Արտակ Առաքելյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ՝ մասնավորապես վերջինիս կողմից «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում՝ «Արտանիշի» արգելոցում պետական սեփականություն հանդիսացող հողամասի վրա առանց հողօգտագործման իրավունք ունենալու, առանց թույլտվության թվով 1 հատ շարժական 9x6 մետր չափերի տնակ տեղադրելու և կիսակառույց 9x6 մետր չափերի շինարարություն իրականացնելու:

Ճամբարակի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2024 թվականի օգոստոսի 20-ին հրավիրվել է վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Արտակ Առաքելյանը /հիմք՝ 09.08.2024թ. փոստային ծանուցումը/:
Արտակ Առաքելյանը, չնայած ծանուցված լինելով վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, չի ներկայացել վարչական վարույթի լսմանը, չի ներկայացրել բացատրություններ և միջնորդություններ: 20.08.2024թ.վարչական վարույթի լսումներն իրականացվել են Արտակ Առաքելյանի բացակայությամբ:
09.09.2024թ. և 20.09.2024թ. վարչական վարույթի ժամկետը երկարացվել է 10-ական օրով, համապատասխանաբար 17.09.2024թ. և 30.09.2024թ. հրավիրվել է վարչական վարույթի լսումներ, որոնց մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Արտակ Առաքելյանը /հիմք՝ փոստային ծանուցումները/: Արտակ Առաքելյանը, չնայած ծանուցված լինելով վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, չի ներկայացել վարչական վարույթի լսումներին, չի ներկայացրել բացատրություններ և միջնորդություններ:
Վարչական վարույթի լսումներն իրականացվել են Արտակ Առաքելյանի բացակայությամբ:
Հաշվի առնելով, որ վարչական ակտի հասցեատերը՝ Արտակ Առաքելյանը բացակայել է անհայտ հասցեով, իսկ նախքան վարչական ակտ ընդունելը վարչական մարմինը անհրաժեշտ է համարել նրա ներկայությունը՝ վարույթին առնչվող որոշ կարևոր հանգամանքներ նրանից պարզելու համար, ուստի ղեկավարվելով ՀՀ վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի ա/ կետով 01.10.2024թ.որոշում է կայացվել վարչական վարույթը կասեցնելու մինչև դրա կասեցման հիմք դարձած հանգամանքները վերանալը, բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշում ընդունելու օրվանից հետո 60-րդ օրը լրանալը:
Վարչական վարույթը վերսկսվել է 02.12.2024թ. և կիրառել օրենքով նախատեսված վարչական վարույթի իրականացման ընդհանուր կանոնները:

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վարչական գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում՝ ձեռք բերված ապացույցներով, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը՝
ա. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության Կոտայքի և Գեղարքունիքի մարզային վարչության «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տեղամասի ծառայողի Ժ/Պ Շահեն Էդիկի Գրիգորյանի կողմից Պետական անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում պահպանության և անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների օրենսդրության խախտումների վերաբերյալ 02.05.2024թ. կազմված արձանագրության փաստը:
բ. 07.06.2024թ. «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարողի գրությունը իրականացված ինքնակամ շինությունների վերաբերյալ:
գ. 09.08.2024թ.-ին Ճամբարակի համայնքապետարանում «ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով վարչական վարույթ հարուցվելու փաստը:
դ. Առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի իրականացված վերոնշված շինությունները գտնվում են «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում, հանդիսանում է հատուկ պահպանվող բնապահպանական հող, պետական սեփականություն:

3.Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.

ՀՀ կառավարության 30.05.2002թ. թիվ 927-Ն որոշման հավելված 1-ի 2 և 4 կետերի համաձայն՝

2. «Սևան» ազգային պարկը հանրապետական նշանակության՝ բնության հատուկ պահպանվող տարածք է:

(...)

4. Պարկի հողերը հատուկ պահպանվող տարածքների հողեր են, որոնք ներառում են բնապահպանական, պատմական ու մշակութային և այլ նշանակության հողեր, որոնց վրա օրենքով սահմանված կարգով արգելվում է պարկի նպատակային նշանակությանը հակասող գործունեություն:

Այլ հողատերերի, հողօգտագործողների և հողամասերի սեփականատերերի հողերը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց շենքերն ու կառույցները, որոնք գտնվում են պարկի սահմաններում, օգտագործվում են իրենց նշանակությանը համապատասխան՝ այդ անձանց կողմից պահպանելով բնապահպանական նորմերը՝ սահմանված սույն կանոնադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը, իսկ 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման):

Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնակամ կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնակամ կառույցի օգտագործման ու ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) հետ կապված ռիսկերը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը՝ առանց դատարան դիմելու:

Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները:

Ուրիշի հողամասում գտնվող ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման (ապամոնտաժման), իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը:

Վերը նշված հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ինքնակամ կառույցների առկայությամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման առանձնահատկությունները կարգավորվում են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով:

Ինքնակամ կառույցները չեն կարող ճանաչվել օրինական, և դրանք ենթակա են քանդման, եթե կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական

նորմերի և կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման 2-րդ կետով սահմանված է, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները՝
ա. որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.
բ. որոնք կառուցված են հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
Համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման հավելվածի 33-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին:
Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի՝ համայնքի ղեկավարը, որպես պատվիրակված լիազորություն.

1) համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

ՀՀ հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մնասի համաձայն՝ Համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:
ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:
Նկատի ունենալով, որ իրավախախտումը կատարվել է 02.05.2024թ. առաջ մինչև արձանագրության կազմելը, ինքնակամ կառույցը գտնվում է անմիջապես Ճամբարակ համայնքի Արտանիշ բնակավայրի ոչ ափամերձ հատվածում, մայրուղու եզրից տեսանելի վայրում, ուստի այն հնարավոր էր հայտնաբերել առանց համապատասխան ստուգումներ կամ դիտարկումներ կատարելու, այսինքն տվյալ դեպքում վարչական տույժը կարող էր նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում:
Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, հիմք

ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 58-րդ և 60-րդ հոդվածների, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ կառավարության 30.05.2002թ. թիվ 927-Ն որոշման հավելված 1-ի 2-րդ և 4-րդ կետերի դրույթները.

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Ապամոնտաժել Արտակ Հարությունի Առաքելյանի կողմից «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում՝ «Արտանիշի» արգելոցում պետական սեփականություն հանդիսացող հողամասի վրա առանց հողօգտագործման իրավունք ունենալու, առանց թույլտվության թվով 1 հատ շարժական 9x6 մետր չափերի տեղադրված տնակը և կիսակառույց 9x6 մետր չափերի շինությունը և պետական սեփականություն հանդիսացող հողամասը բերել նախկին տեսքի:
2. Որոշումն ի կատար ածելու համար ուղարկել հողամասի կառավարումն իրականացնող «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ին:
3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Ճամբարակի բաժնի պետին՝ սույն որոշման 2-րդ կետի համաձայն՝ «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից վարչական հարկադրանքի միջոցներ կիրառվելու ընթացքում, համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:
4. Արտակ Հարությունի Առաքելյանին ազատել վարչական պատասխանատվությունից վարչական տույժ նշանակելու ժամկետը լրացած լինելու հիմքով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկման պահից:
6. Որոշման օրինակն ուղարկել վարույթի մասնակիցներին և բացատրել, որ այն կարող են վարչական կարգով բողոքարկվել ճամբարակ համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Համայնքի ղեկավար՝ ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ

20 __ թ. _____ ____
ք.Ճամբարակ